«էկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կազմակերպմամբ եւ Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն ՀԿ-ի հետ համագործակցությամբ մարտի 2-ին Լոռու մարզի Թեղուտի մշակույթի տանը տեղի ունենացավ

հանդիպում՝ «Եղիր իրազեկ և պահանջատեր, պաշտպանիր քո շահերն ու իրավունքները ԱԾԹՆ հայաստանյան գործընթացում» թեմայով:

Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ , Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Հանդիպման նպատակն էր Լոռու մարզի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների ՀԿ-ներին և բնակչությանն աջակցել՝ լիարժեք մասնակից դառնալու հանքարդյունաբերության ոլորտը թափանցիկ և հաշվետու դարձնելու ԱԾԹՆ հայաստանյան գործընթացներին:

Մասնակցում էին Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյանը եւ ծրագրերի համակարգող Անուշ Էվոյանը, փորձագետներ, Թեղուտի բնակիչներ եւ ակտիվ քաղաքացիներ: Քննարկման ժամանակ ներկայացվեցին հանքարդյունաբերության հետեւանքով համայնքում առաջացած խնդիրների մեղմմանն ուղղված ծրագրային գաղափարներ: Առաջ քաշվեցին քաղաքացու իրավունքների վերաբերյալ հարցեր՝ հանքարդյունաբերական ընկերությանը եւ ՀՀ կառավարությանն ուղղված հստակ պահանջատիրական պնդումներով: